

ՀԱՍՏԻ

Rédaction du Journal Arménien "ARCHALOUYCE" Hotel d'Arménie S. Bulbulian (Egypte) LE CAIRE

Directeur EGHICHÉ TOROSSIAN

Ծանուցումներ մասնաւոր պայմաններով կ'ընդունուին :

Ձեռագիրներ եւ չեն տրուիր :

ԱՐՇԱԼՈՍՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՏԱՐԻ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԳՈՎՈՒԹԻՒՆ

—\*—

ԵՊԻՊՏՈՍ

Տարեկան 40 Եգ. . .

Վեցամսայ 20 . . .

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Տարեկան 12 Եր

Ապագի բաժանորդագրութիւն չի ընդունուիր :

ՊՐ 13 | ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍՅԱՆ | Արժեքայ Եգիպտական Կառավարութեան | ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԳԱՆՁԱՊԻՏ ԵՒ ԳԻՒԼՊԻՒԼԵԱՆ | ՊՐ 13

ԱԶԻՉ ՊԵՅ ԷԼ ՄԱՍԻ

Գնդապետ Ազիզ պէյ էլ Մասրիին խնդիրը ժամանակէ մը ի վեր չափազանց կը յուզէ մեր Եգիպտացի հայրենակիցներուն սրտերն ու մտքերը :

Մենք՝ Գնդապետը չենք ճանչնար և ո՛չ ալ հաստատապէս գիտենք թէ՛ իր ձերբակալման, բանտարկութեան, խոչտանդումներուն և պատճառական ատենին առջեւ հանուելուն պատճառները ի՞նչ կըրնան եղած ըլլալ. ասոր պատասխանատուութիւնը ձեռնհաս չենք ընդունելու :

Միայն գիտենք և այն ալ ի լրոյ, թէ՛ Ազիզ պէյի և ազատութեան հերոս Էնվէր պէյի՝ — այժմ փաշա — մէջ անձնական հակառակութիւններ կան եղեր և ատոր կը վերագրուի Ազիզ պէյի դէմ լարուած արդի հալածանքները, ու մեր սիրելի հայրենակիցներն ալ թերևս իրաւամբ՝ իրար անցած են, եգիպտացիներուն քրտնախորտ պաշտպանելու համար :

Գնդապետին ի նպաստ յուզումնալից գումարումներ տեղի ունեցան հազարաւորներու մասնակցութեամբ և բոլորքի հեռագիրներ ուղղուեցան առ որ անի էր :

Ասոնց ամենէն նշանակալիցը կը մնայ Շէյխ էլ Սէյիտ Հասան Մուսա էլ Աքքատիի առ մեծ Եպարքոսն ուղղած մէկ հեռագիրը, որ հետեւեալն է, և մենք զայն կարտագրենք տեղական թերթերէն :

Առ մեծ Եպարքոսն ի Կ. Պոլիս

Հանրային կարծիքը չի հանդարտիր, բայց եթէ Ազիզ պէյ էլ Մասրիին Եգիպտոս վերագործովը, Կարելին ըրէք, որպէսզի Էնվէր փաշա՝ Եգիպտոսի և Օսմ. տէրութեան յարաբերութիւնները խաթարուելուն պատճառ չի դառնայ :

ԷԼ ԱՔԻՍԻ

Կը սիրենք յուսալ թէ՛ Պոլսոյ Պատերազմական Ատենը Գնդապետ Ազիզ պէյ էլ Մասրիին Եգիպտացիներուն պիտի շնորհէ զայն դատապարտելու բա՛նաւոր պատճառ մը չի գտնելով :

Թէպէտե Երեկուան թուով — 14 Ապրիլ — Փարիզէն հեռագիր մը Մարտի Կ. Պոլսէն ստացած տեղեկութեանց յենլով, Ազիզ պէյ էլ Մասրիին մահուան դատապարտուիլը կ'ըմանուցանէ, բայց մենք դարձեալ պատճառներ ունինք յուսալու թէ՛ Պոլիսը Եգիպտացիներուն խնդրանքը չ'պիտի մերժէ . . .

ԱՐՇԱԼՈՍՅԱՆ


ՀԱՄԻՏԱԿԱՆ ՄԵԹՈՏՆԵՐԸ ԵՒ ԹՈՒՂԹԻ ՄԻՒԹԱՐԱՆՔ

Հայկական բարենորոգումները, որ շնորհիւ Ն. Վ. Պողոս Բաշալի անդուլ և քրտնաթոր շանքերուն, պահ մը լայն սահմաններու մէջ մամուլը և հետաքրքիր միտքերը զբաղեցուցիւր ալաբուրֆա քղանկները ցոյց տալու վրայ է : Գոնէ վերջընթեր հեռագիրները — եթէ երբէք անոնց ըսածներն ալ «պատգամ տեառն» ընդունելու բարեմտութիւնը պիտի ունենանք — զայդ հաստատող յուսահատական բնոյթ մը ունին :

Կ. Պոլսէն Ապրիլ 13 թուականա հեռագիր մը կ'ըսէ թէ՛ Բ. Գուրը կը կանխէ Եւրոպան՝ Հայկական նահանգներուն — ծիծաղելի դարձուածքով մը Anatolie Orientale յորջորջուած տեղերուն — բարեկարգութեանց հարցը, Եւրոպական միջամտութիւնը չիզըբացնելու համար անտարակոյս՝ Վանի, Պիթիսի, Սըվազի, Էրզրումի և Գարբերգի նահանգներուն համար մէկ մէկ անուանական պաշտօնատարներ ճամբայ հանելով, որոնց գործը պիտի ըլլայ, ինչպէս անվարան կարելի է հետեցնել, երբ ոյթները միայն փրկել . . . Հայկական հարցին իր նախորդները գերազանցող ամենափայլուն յուզարկաւորութիւն մը պատրաստելու համար . . .

Ձարմանալի և զգայալուն չեղաւ մեզի համար այս վերջին հեռագրական ծանօթագրութիւնը :

Ամեն անգամ որ մեր հետաքրքիր ու անհամբեր ազգայիններէն ո՛մանք կուզէին մեզմէ տեղեկութիւն ստանալ «Բարեկարգութեանց» հարցին պարբերապէս ըս.



Գլխի Քալսուսոֆ Տալաուի

ԱԶԻՉ ՊԵՅ ԷԼ ՄԱՍԻ

տացած՝ փոշերուն վրայ, մեր պատասխանը կըլլար .

— Էւ այնքուս բաժինը թուղթի վրայ մեզի տրուած միթարութիւններն են. բան մը՝ որուն իտորոց սրտի վարժուելու համար շատ մը տարիներ — չըսելու համար դարեր — զոհելու համբերատարութիւնն ունեցած ենք . . .

Ամենքս ալ գիտենք որ՝ յոռետեսութիւնը ( pessimisme ) լաւ արհեստ մը և ապագայ խոստացող ասպարէզ մը չէ. անիկա շատ գէշ կը

վարձատրէ ենթական և մահացու թշնամիներու բանակ մ'ալ կ'ստեղծէ թէև անոր դէմ, բայց իրողութիւնը իրողութիւն ըլլալէ չի դադրիր . . .

— «Թո՛ղ ձեր ըսածը ըլլայ, գոչեց տիեզերագէտն Կոպերնիկոս Հաւատաքննութեան ատենին առջև, բայց այսու ամենայնիւ երկիրս կը դառնայ . . .

Հիմակուան դարձածն ալ Համիտական նրբահնար քաղաքակա.

նութիւնն է, որ մեզի յանկարծա- կի չի կրնար բերել, արդէն իսկ անոր դառնութիւնները ց'մրուրն ճաշակելու վարժուած ըլլալնուս համար :

Եթէ միայն մեր կողմէ եղած ըլլար այս դիտողութիւնները, թե- րևս գտնուէին ուխտեալ լաւատես- ներու խումբեր, որոնք զմեզ ան- գամ մը ևս քարկոծելու արտօմակ մը ունենային : Բայց՝ եկու տես որ՝ մեր ազգային կեանքին համե- մատաբար նուազ ծանօթ, բայց Համիրտական դիւահնար դարձուած ք- ներուն հետամուտ և ականատես օ- տարազգիներ՝ յոռետեսութեան ա- մենացայտուն նմոյշները կը բերեն մեզի, մանրակրկիտ վերլուծումնե- րու առարկայ դարձնելով զայնս :

Աստիճակ մէկն ալ՝ վերջերս տեղ- ւոյս «Բրոկրէ» թերթին մէջ Վիդ- թոր Պէրար ստորագրութեամբ ե- րևցած յօդուած մըն է, որուն նըր բանկատ հեղինակը humoristique բայց սիրուն բացատրելակերպով մը Համիրտական մէթոտը կը վերլուծէ :

Մեր ընթերցողները բողբոջին չի զրկելու համար այդ հրահանգիչ նկատողութիւններէն, անոնց մէկ քանի մասերը թարգմանաբար կը արտագրենք այս էջերուն մէջ որ հե- տեւեալն է :

«Ահաւասիկ շարժներ իրարու յաջորդեցին «բարեկարգութեանց» ծանօթ համաձայնութիւնը գոյա- ցաւ : տակաւին մինչև չորս շարժա- րուածքներ կը տրուէին հայերուն : Պօլիս և Ս. Բէթէրպուրկ, Բ. Դուռը, դեպքանները և նոյն իսկ «Միու- թեան և Յառաջդիմութեան Գոմի- թէն» լաւատեսութեամբ կը ս'ա- նէին :

«Այլ ևս պակաս մը չկայ, որ բարենորոգումները սկսին, կամ գէթ անով զբաղուի, բայց եթէ երկու բան : Երկու երկրորդական պակաս- ներ, վերահսկող անձերը և ծրա- գիրը» : կ'ըսէին :

«Հասկնալի է որ՝ կը շարունա- կէ Պ. Վիդթոր Պէրար, որ ծրագ- րին ուսումնասիրութիւնը անձերուն ընտրութիւնն յետոյ տեղի կունե- նայ : Պէտք է ուրեմն նախ երկու ընդհանուր - քննիչները գտնել, որ ըսվհետև Արևելեան Անաստուրն եր- կու բաժանումի վերածել որոշ- ուած է :»

«Եւ որպէսզի այս փնտտուք ները նուազ անհաճոյ պայմաններու մէջ կատարուին, նախապէս համա- ձայնութիւն գոյացած է որ այս գոր- ծերէն հեռի պահէին Ֆրանսացիները, Անգլիացիները, Ռուսները, Գեր- մանները, Իտալացիները և այլն : այսինքն մեծ պետութեանց բոլոր պաշտօնատարները և միայն չեզքք պզտիկ տէրութիւններուն ուղղէին այս քրտնակները : Եւ որովհետև ո՛չ Զուլիցերիա, ո՛չ Տանընարգա և ո՛չ ալ Նորվեգիա իրենց թիկնածուները չեն ներկայացներ, կը մնան միայն Պելճիքա և Հօլանտա՝ որ այս պահանջը պիտի կրնան գոհացնել : Ու ասոնց դեպքանները՝

— Ահաւասիկ մեր թիկնածու- ները պիտի ըսեն Բ. Դրան :

— Այսչափ կարեոր երկու տե- ղերու վարիչներ ընտրելու համար առ նուազն քանի չափ դանտիտա- ներ պէտք են, պիտի պատասխանէ Բ. Դուռը դեպքաններուն :

Այս վերջինները փնտտուքնե- րու պիտի ելլեն Պէլթերուն մէջ : Բ. Դուռը պիտի մերժէ, Հօլանտա- ցիներուն պիտի դիմեն, որուն դարձ- եալ առարկութիւններ պիտի ընէ :

Բ. Դուռը քանի մը Միլիաներ և Բօրթուկէզներ պիտի ներկայացնէ դեպքաններուն, որոնց անհաճոյ պի- տի թուին սոյն ընտրելիները և այս տեսակէտի անհամաձայնութիւնները պիտի գրաւեն աւելի քան երկուտա- սանակ մը կամ հնգետասան ամիս- ներ :»

«Ետոյ 1915 Մարտ ամսոյ մօ- տերը Պ. Պ. դեպքանները պիտի ը- սեն : ահաւասիկ չորս հնգեակ թեկ- նածուներ :»

— Պայրամէն յետոյ զանոնք քննելով իմ ընտրութիւնս պիտի ը- նեմ՝ պիտի պատասխանէ Բ. Դու- րը՝ Յուլիս ամսոյ մէջ :

Քան անուններու քննութիւնը քանի մը շարժաններ պիտի արժեն, և երեք կամ վեց ամիս յետոյ, քննիչներու անուանումը՝ որ ստի- պագրաբ կը պահանջուի դեպքան- ներէն, Վեհ. Սուլթանին հաւանու- թեանը պիտի ենթարկուի և մենք 1916ի սեմբերուն վրայ պիտի գտ- նուինք :

«Վեհ. Սուլթանը իր հաւա- նութիւնը պիտի ստորագրէ քանի մը վեցեակ ամիսներէ յետոյ, այն ատեն աշխատութեան առաջին կէ- սը աւարտած պիտի ըլլայ և պիտի գանք երկրորդին : այն է՝ թէ ի՞նչ պիտի ծրագրուի մը գործադրութեան պիտի դրուի :»

«Ամէն ջանք ի գործ պիտի դրուի այս Բրոկրալը փնտտելու և մինչև վեցէն ութը ամիս հազու բա- ւական պիտի ըլլայ հայկական պահանջներուն բնոյթը ճշդելու և 1916 Յուլիսի մէջ փեմաբանութեան գըր- ուելով պիտի երկարաձգուի մինչև 1917 Յունուար ամիսը :

Վեցեակ մը փոքրիկ ամիսներ ալ աւելցուցէք Մարգիթ - Վանոնա- գրին հրովարտակը հանելու, զօրա- ժողով ընելու, ստակ ճարելու (ի մա՛ փոխառութիւն) ելմտական կա- ցութիւնը հաւասարակաւելու և ի վերջոյ գործին մեքենան շարժման մէջ դնելու, և հայերը 1917 Յու- լիսին է որ նոր դարաշրջանին բա- ցումը պիտի ողջունեն :»

«Լաւատես և մանաւանդ համ- բերող ըլլանք ուրեմն՝ կը յարէ Պ. Վիդթոր Պէրար : կատակերառութիւ- նը տակաւին նոր կ'սկսի և մենք առջևնիս երեք՝ և նոյն իսկ չորս տարիներ ունինք, եթէ երբէք կովկասէն փչող խոտաչունջ քամի մը չի չիջեցնէ աշտանակները և հիմ- նայտակ չ'ընէ ինչ որ կը մնայ տա- կաւին խօլ գիւանագիտութեան խա- ղացած կատակերգութենէն, որուն ննթակային Օսմանեան տէրութիւն անունը արուած է :»

Ետոյ սրամիտ յօդուածագիրը վախ կը յայտնէ թէ՛ յայտնի կ'տես- նուի որ Բ. Դրան հնարամտութիւ- նը՝ քանի մը դեպքաններ ալ իր կողմը ձգելով, Հայաստանի մէջ 1896ի և 1909ի տեսարանները պի- տի պարզէ : Բարենորոգում կը խոս- տացուի, բայց շարժերն են որ պի- տի վերադառնան :

«Ետ գէշ ծառայութիւն մը մատուցանել է, կրտէ յօդուածագի- րը՝ թէ՛ թուրքերուն և թէ՛ հայե- ըունն այսօրուան և վաղուան իրա- կանութիւնները ծածկելը : Լաւա- տես ըլլանք, տունենք բարենորոգ- մանց ծանուցումները և Բ. Դրան ու Պատրիարքարանի մեծագորգ հաշ- տութիւնները : . . . բայց չի մոռ- նանք որ Պօլսոյ դեպքանները 1908 Օգոստոսէն ութը ամիս յետոյ, բօ- լոր եղած լաւագոյն բաներուն իրը անմիջական հետեւեմք և արդիւնք՝ Ատանայի արհա՛իրքները ու նեցան :»

ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ

Հ Ա Ջ Ա Ր Ո Ր Ի Ն Ա Կ  
Գ Ի Ր Գ Ե Ր Ո Ւ Վ Ի Ի Զ Ա Կ Ե Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Կազմալուծեալ Հայկական Մամ- լոյ Ընկ. եան կազմակերպած հազար օրինակ և հազար պարզաներով վի- ճակահանութիւնը՝ որ երկար ատե- նէ կը ձգձգուի, աւարտելով վի- ճակահանութիւնը տեղի ունենալու համար, առժամեայ վարչութիւն մը պիտի ընտրուի :

Այս առթիւ իրենց աջակցու- թիւնը նուիրելու փափաք և բարե- հաճութիւնը ունեցողներէն կ'իմնդ- րուի, իրենց անունը ծանուցանել թերթիս հասցէին, արժամեայ վար- չութիւնը կազմելով այդ աշխատու- թիւնն ալ աւարտելու համար :

Ն Ա Մ Ա Կ Գ Ա Հ Ի Ր Է Է Ն

Ա Ջ Ն Ո Ւ Ո Ւ Թ Ի Ի Ն  
Գ Ո Ն Է Կ Կ Թ Ի Ի Մ Ը Չ Ա Փ

Բաւական ժամանակէ մը ի վեր ո- րոշ զսպանակէ մը թելագրուած ու դե- կավարուած «Ազգ» շարժաթերթը ազ- տոտ պայքար մը կը մղէ, Հնչ. Կու- սակցութեան ու փաստարան Տիար Ասու- տուրեանի ղէմ :

Ճաւաղի պարագայ մըն է այս, ու իրեն ստանձնած գիրը շատ արգահա- տելի է :

Տարի է մը ի վեր լաւ գիտեմ որ բաւական քննադատեցին անարդարօրէն, Հնչ. Կուսակցութիւնը : այն կուսակ- ցութիւնը՝ որուն ձողին մէջ անած ու մեծցած է լեզգոյն խմբակը : Եւ ներ- կայիս սակայն ջան ի կուրծ կը նկատի բողոքովն տարբեր գոյնով ու տարբեր ակնոցով դիտել Հնչ. Կուսակցութեան ներկայ քաղաքականութիւնը, և իսկ նը պատակ ունենալով հայ ազգին առջև օգորտել կուսակցութեան մը պատիւը :

Մարուր, յուրջ, ու անաջտ մա- մուլի մը տէրը չէ որ կը կատարէ «Ազգ» թերթը, անիկա աւելի անհամբարշտու- թեան ու հակառակութեան սերմեր կը ցանէ եւ միացած ուժերը կը պտտակտէ : Հնչակեան կուսակցութիւնը ոչ մէկ ժամանակ պիտի զիջանի անսպ խմբա- կի մը թելագրութիւններուն, ու յոր- գործներուն, քանի որ լուրջ ու բանի- մաց զեկավարող ուժեր ունի իր մէջ : Թող լաւ ըմբռնէ ասիկայ ու լաւ ալ համոզուի «Ազգ» խմբակը :

Իսկ գալով Մէթր Ասատուրեանի հանդէպ ունեցած անձնական ատելու- թեան, ու մղած կեղծ ու պատիւ պայ- քարին, ես պիտի թելագրէի անկեղծօ- րէն այդ խմբակին որ մի քիչ ազնիւ նախանձախնդրութիւն ու պատու զգա- ցում ունենային ու լռէին, վասնզի այդ խմբակը զեկավարող ուժերը իրենց իսկ անձնական նամակներով կը խոստովանին անոր անմեղութիւնը, ու անցեալին օգ- տաշատ գործունէութիւնը : Անիկա ան- համամատօրէն բարձր ուժ մըն է ու չի զիջանի որ իսկ ինքզինքը արդարա- ցրնել այդ կեղծ ամբաստանութիւննե- րուն ղէմ :

Հնչ. Կուսակցութիւնը կը կարծեմ թէ քննեց իրեն ղէմ հղած ամբաստա- նութիւնները ու հասկցաւ անոնց ամ- բողջութիւնը ու անպարտ արձակեց զայն :

Իսկ գալով մասնիչ ու ազդողաւ Արթիւր Եսաբեանի խնդրոյն, Հնչ. Կու- սակցութիւնը անոր արժանաւոր պատի- ժը պիտի տայ մօտ ժամանակէն : Եւ ար- ղէն իր շարքերէն վերջնականապէս ար- տաքսեց զայն : Հետեւեալը հարկ չի մնար քննադատել Կուսակցութիւնը քա- նի որ նոյն կուսակցութեան Գահիրէի մասնաճիւղին եռանդուն վարչութիւնն էր որ գտաւ անոր ազգաբաւուրեան հետքերը, և հարկ եղած ի գործ գրաւ- փութաջանութիւնով մը, ու այդ մասին շատ բան կը պարտինք նաեւ Մէթր Ա- սատուրեանին :

Վերջին խօսքով պիտի թելագրէի «Ազգ» խմբակին որ բաւական նկա- տէին եղած քննադատութիւնները եւ ջանային իրենց օրկանը օգտակարագոյ- նին ծառայեցնել : հակառակ պարագա- յին միջոցները չեն պակսի գիրենք սանձահարելու :

Թ Ա Թ Ո Ւ Լ Ն Ե Ր Կ Ի Զ Ե Ա Ն

Ե Գ Ի Պ Տ Ա Կ Ա Ն Մ Ա Մ Ո Ւ Լ Ը  
Ե Ի

Դ Ա Տ Ա Ր Ա Ն Ա Կ Ա Ն Գ Ն Ա Հ Ա Տ Ո Ւ Մ

Բայց այդ չիտացած մարդերը չեն գիտեր տակաւին թէ՛ իրենցմէ բրեքսիթ ճանչցուած գիտութիւնը, Մամուլին ա- մենէն յետինին քով անգամ՝ իրենց քով դանուածէն շատ աւելին կայ :

Լրագրական դատավարութեան մը վրայ պիտի յանգի խօսքերնիս : ատոր տարակոյս չմնալը հասկցաք անշուշտ : Մի ոմն վաճառական շէքօ - Էթիօ- սիէն» ի մէջ հրատարակուած յօդուածի մը համար 100 ոսկի կը պահանջէ եղեր անոր ճնթէնէն իրրեւ տուած կեքտի :

Սոսն դատարանաց նախնական բաժնին մէջ տեղի ունենալով սոյն դա- տավարութիւնը, մէկ ոսկի տուգանքի ենթարկուած է «Էթօ - Էթիօսիէն» ի Տը- նօրինութիւնը՝ փոխանակ հարկերի, դա- տարանին կողմէ քննուելով որ՝ Մա- մուլը արդի ընկերական կեանքին մէջ գործնական ունի հեղինակութիւն եւ ձեռնհասութիւն չունի հրատարակուած յօդուածներուն ստուգութիւնը հետա- պնդելու :

Դատարանին նախագահը հետեւեալ նկատողութիւններուն վրայ հիմնած է իր վճիռը :

Նկատելով որ լրագրողները բոլոր- րովին զերծ չեն պատասխանատուութե- նէ : հանրութեան առաջնորդելու իրենց առաքելութեանը մէջ, առաքելութիւն՝ որ օրէնք եւ ժողովրդային հրահանգէն կախուած չէ :

Թէ քանի որ մամուլը ղէպքերը ծանուցանելու իր աճապարանքին մէջ արդարութեան իրաւասութիւնները նոյն իսկ նկատողութեան կը վրիպեցնէ, ուս- տի պէտք է որ զոնողութիւններու զնով ըլլան անոնք :

Վերջապէսով որ բողոքարկուին փաս- տերը անգոր են և : հրատարակուած յօդ- ուածին պարունակութիւնը լոկ ֆան- թէզի մըն է, եւ պարզաթիւնները միայն

ԵՐԳԻՆ

Պ. Լեւոն Էսաճանեանի  
Կ. Պոլիս

Յեղիդ դարաւոր տառապանքներուն արձագանգ՝  
մ'առնէր կանգ  
Եղի՛ր, մինչեւ որ թելերն կիթառիտ բազմալար  
որ յար լար  
Միաբան թրթռան, մաշին, նրբահման եւ որ մ'ալ  
գաղղրին ա'լ  
Հնչելէ ցաւեր՝ վիշտեր, աղէտներ ահաւոր  
սգաւոր,  
Ինչպէս սոխակը ամեն առաւօտ դարնանահոտ  
իր անյօդ  
Գեղզեղէ երգը թաւ թուփերուն մէջ՝ երբ իր լանջ  
յօգնատանջ  
Կուռի, կը լայննայ արշալոյսին մէջ կարմրախայտ,  
որ մի խայթ  
Անգամ չունի ո'չ, բարիքներէ զատ լուսազարթ  
հարազատ:

Կ. Պ. Փիլիպոսեան

Քօնստանդուպ

ՄՅԱԿԻՆ

Սրբոր հանգչիս աքնութենէդ առօրեայ,  
Դեր մարմինդ դալարակերտ խշտեակին.  
Թող վայրկեան մը հանգարտ միտքդ սլանայ  
Հոն՝ ուր յոյսի փաղփոյն լայսեր կը վառին:

Երազանքիդ հեշտութենէն դուն արբերո՛ւ  
Նայէ պահ մը տիեզերքին անսահման.  
Քու լանջքիդ տակ թող ջիղերդ թրթռան,  
Ու բարձրացուր շուտ գլուխդ հպարտ ժիր:

Նայէ հողին բազուկովդ ահօտուած՝  
Ձոր կը ցողես քրտինքներովդ ամեն որ  
Եւ գոհունակ հառաջանքով կուրծքդ բաց,  
Նայէ՛, դիտէ՛ սքանչացիր դու անոր:

Նայէ՛ անոր որ կենսունակ բոյրերով  
Անմահութեան գաղափարը կուտայ միշտ,  
Հոն կը հանգին անթեւ հոգեր, ցաւ ու վիշտ,  
Հոն կ'ամբարտին աղապատոնք ու գորով:

Սաղմէ՛ մշակ, այդ արգանդը թանկագին,  
Ու գրգիռ տուր անոր պարարտ ծիծերուն,  
Թող էակներ հոգևով կառչած ստինքին,  
Ծծեն կեանքի ուժեղ հիւթը կուռ, բեղուն:

Հերկէ՛, ցանէ՛, մեծ փառք մըն է քեզ համար  
Պրկուիլը դնդերներուն, երկաթէ  
Խոփիդ երկայր ժանիքովդ պրպտէ՛  
Հոն թագնուած հարուստ դանձերն անհամար:

ՎԷՎ

1908

զայնս իբր իրականութիւն ընդունելով  
կ'ազդուին:

«Նկատելով որ խնդրոյ առարկայ  
թերթին ընթերցողներուն մէջ պարզա-  
միտները բացառութիւն կը կազմեն եւ  
հետեւաբար անոնց կարծիքը մեծ կշիռ  
չունի:

«Նկատելով մանաւանդ որ՝ այս դա-  
սակարգին մէջ բողոքարկուին ենթադ-  
րածին չափ կարեւոր չմտնուիր հասած  
վնասը եւ այլն, դատարանը մէկ ոսկի  
տուգանքի կը դատապարտէ այդ յօդ-  
ուածը հրատարակող թերթը:

ՅՕՐԹՕ ԷԿԼՕՆ

ՇԱՐԱ ՊԵՅ ԷԼ ՆԷՀՏԷՅՆ  
Փայաքչիի վաճառատան գրիմաց  
Քարթ Բօստուլ Լուսանկարներուն  
տուգանքն 10 զրուչէն:  
Ե Ա Պ Է Լ Է Շ  
ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ. — Սփենքս Տարե-  
ցոյց — Ուղեցոյցին վերաբերող մանկա  
կան բաժնի լուսանկարներուն համար

քառորդ տուգանք 5 զր. ողջի սակա-  
կուած է, փափաքողները կրնան դիմել  
մինչեւ Մայիս 1 ը: Անոնք որ կուշանան  
կը զրկուին:

ՅՈՒՑԱԿ Բ

ԹԱԼԱՍԻ (ԿԵՍԱՐԻԱ) ԱՇԸԴԵԱՆ ՎԱՐ-  
ՓԱՐԱՆԻ ԿԻՑ ԼՈՐԱՀԱՍՏԱՏ ԵՐԿՍԵՌ-  
ՄԱՆԿԱՊԱՐՏԷՉԻ ԼՈՒԻՐԱՏՈՒԹԵԱՆՑ

Տիարք,  
Առաքել Պէրպէրեան 50, Բա-  
րունակ Ճէմալեան 60, Միհրան Սըմ-  
սարեան (Փայուլ) 50, Կիւրիւնլեան  
եղբարք (Պուլաք) 40, Պէրպէրեան  
եղբարք (Ոսկերիչ) 30:  
Տօքթ. Ն. Բէւէճիեան, Ստե-  
փան Իպիշեան, Գրիգոր Չամուր-  
եան, Կարապետ Ճըրճըրեան, Լեւոն  
Քէսթէքեան, Նշան Եագուպեան,

ԱՇԽԱՏԱՆՈՑ

ԱՐՈՒԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԸՆԹԱՑԻԿ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ

Ն. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Օրերայի Հրապարակիմ վրայ, Բրիսթոլ Պատին դիմաց:

Փորագրութեան արուեստի բոլոր ճիւղերը մասնագիտօրէն կը կիրարկուին  
մեր աշխատանոցին մէջ կատարելալ ճշգրտագինութեամբ: Առեւտրական գրասեն-  
եակներու յատուկ այլազան միջոցներ, ինչպէս՝ Տարքոն, պիւստոսթոն պղինձէ  
եւ քաւչուէ քիւլպրիք բոլոր քիւլպրիք եւ այլ որոնք մեր տրամագրութեան տակ  
կը գտնուին դիւրամատչելի գներով:  
Impression en Relief

Կարապետ Արիկեան (Աղէքսանդ-  
րիա), Կարապետ Չայլազեան (Ա-  
ղէքսանդրիա), Յ. Սաթըրլընդեան  
(Աղէքսանդրիա), Տիգրան Ճամուզ-  
եան, Սարգիս Սըմսարեան, Բար-  
սեղ Արապեան, Կարապետ Պէօ-  
ճիւքեան, Յարութիւն Սիւտեան,  
Յակոբ Պախթիարեան, Կարապետ  
Պախթիարեան, Կարապետ Արապ-  
եան, Յարութիւն Գլըճեան, Բար-  
սեղ Բալամուտեան, Թարոս Թորոս-  
եան, Սալիմ Չատրճեան, Մարտի-  
րոս Չատրճեան, Գէորգ Նահապետ-  
եան, Երուանդ Փափազեան, Պեռ-  
րոս և Հայկ Ալըզեան եղբ., Դանի-  
էլ Սաղրեան 20 ական զր. ողջ:

Տիարք՝ Յակոբ Գէլչէճեան, Շահ-  
միրեան և ընկ. Յակոբ Բարթիկեան  
Ս. Չայլազեան (Աղէքս.) Ա. Մէստ-  
ճիեան, Հայկազ Ուզունպօղոսեան,  
Թաղէոս Անանեան, Յոլակ, Մ.  
Շալճեան, Յ. Տաղճեան, Տ. Թէր-  
զիպաշեան, Ա. Սինանեան, Ռ. Բար-  
սեղեան, Կարապետ Վարդանեան,  
Բ. Եօրտամեան, ոմն, 10 ական  
զուրուշ ողջ:

Գումար 922,5  
Գումար Ա. Յուլակի 570 —  
Համագումար 1492,5  
Այսօրուան բօսթով՝ տեղւոյս  
Հանգանակիչ Մասնախումբին որո-  
շումով թալասի նորարաց Մանկա-  
պարտէզի Հեղաբարձութեան հաս-  
ցէին զրկուեցաւ Պանք Օթօմանի  
(Թիւ 179, 512) 159, 355 2էք մը  
10 Օմանեան ոսկիի:

Ա.Ձ.Գ.Ա.ՅԻՆ

ՀԻՆԷՆ ԼՈՐԷՆ  
Աղքատախնամ Ընկերութեան  
չըջանաւարտ Գործ. Ժողովոյ ան-  
դամներէն Տիար Գրիգոր Տամկաճ-  
եան, 12 Ապրիլ թուակիր նամակով  
ճը՛ ի մէջ այլոց, գիտողութիւն կը  
ընէ Գեր. Տէր Բարգէն Եպիսկո-  
պոսի Մաղկազարդի կիրակի օրը խօ-  
սած քարոզին այն մասերուն հա-  
մար, որպէս թէ՛ Գահիրէի Հայոց  
Աղքատախնամ Ընկերութիւնը 70  
ոսկւոյ բազ ունի եղեր և այլն:  
Եթէ Գեր. Եպիսկոպոսին խօս-  
քերը հրապարակային չըլլային, որ  
ինչպէս կերևի՝ վերաւորանք հա-  
տուցած է Աղքատախնամի շրջանա-  
ւարտ Գործ. Ժողովոյ անդամներուն,  
Տիար Տամկաճեանէն անհատապէս  
պիտի խնդրէինք որ ինքն ալ իր

կարգին նմանօրինակ խնդիրներ չի  
յուզէր, որովհետեւ գործին մէջ  
թիւրիմացութիւններ ըլլալու են:  
Մենք գիտենք թէ՛ նախորդ  
Գործ. Ժողովը, յետ մանրակրկիտ  
քննութեանց Ընդհ. Ժողովոյ շնոր-  
հակալեաց քուէին արժանացաւ, իր  
մատակարարութեանց և ըրած խը-  
նայողութեանցը համար. իր հրա-  
ժարականին հետ չորս հատ ալ Գը-  
րէտի ֆոնսիյէի արժեթուղթ — մօտ  
60 ոսկի — Առաջնորդարանի տրա-  
մագրութեան տակ իր յաջորդին  
թողլով:  
Գալով այդ նամակի ուրիշ մա-  
սերուն. լաւագոյն է որ անոնք ձե-  
ռքնհաս մարմիններու դատողու-  
թեանը յանձնուին՝ քան թէ հրա-  
պարակային քննադատութեանց նիւթ  
մատակարարեն:  
Կը կարծենք թէ՛ ընդունելի մի-  
ջոցը այս է:

ՀԵՌԱԳԻՐ

Ի ՆՊԱՍՏ Ա.Ձ.Ձ ՊԷՑ ԷԼ ՄԱՍՐԻԻ  
Լոնսոն 13 Ապրիլ. — Թայմզ Կ.  
Պօստն կը տեղեկանայ թէ՛ Պենկա-  
զիէն եւ Եգիպտոսէն 15.000 արաբ-  
ներ Մուշրասիկն հեռագրած են Գե-  
ղապէս Ազիզ պէյ էլ Մասրիին ի  
նչպիսիս:  
Կը հարաստեն թէ՛ Էնվեր փաշա  
պատասխանած է թէ՛ Մուշրասի իր  
պատասխանը այն ստեղծ պիտի թայ՝  
կեր դատաւարութիւնը վերջ գտնէ:  
Եգիպտոսի մէջ սարածուած այն  
շշուկիկն համար թէ՛ Ազիզ պէյ մահ-  
ուան դատապարտուած է Կ. Պօստոյ  
պատերազմական ասեանէն, և գիպ-  
տոսէն քաղաքի հեռագիրներ ուղ-  
ղուած են Բ. Իրան:  
(Մ. Խ. — Այս հեռագիրներէն մե-  
կը արդէն արտագրուած է մեր ա-  
ռաջին էջին մէջ.)  
Փարիզ 15 Ապրիլ. — Արաբ ու-  
սանդակներու ղեկավարութիւնը մեծ  
եպարտիսին հեռագրած է միջապատեղ  
Մուշրասիին մօտ ի նպաստ ազիզ  
պէյ էլ Մասրիին, Օսմանեան կա-  
ռավարութեան շահերը ի նկատի  
ռեկոնստրուի:  
Կ. Պօլիս 15 Ապրիլ. — Կայսե-  
րական հրովարտակ մը ազիզ պէյ էլ  
Մասրիի դէմ օրուստ մահապատժի  
15 արի քաղաքայութեան փոխած է:  
ՎԷՆԷՉԵԼՈՍ  
Կ. Պօլիս 15 Ապրիլ. — Պ. Վե-  
նեչեչու Քօրճու մեկնեցաւ:  
— Ճապիս պէյ հոս հասաւ եւ  
խանդավառ ղեկավարութեան ար-  
ժանացաւ:

# T I R I N G

## Թ Ի Ր Ի Ն Ք

ՊԱՎԱԿԻ ՓՈՂՈՑ ԵՄԻԿԻՆ ՓԱՍՏԱԼ

Վ Ա Ջ Ա Ռ Ա Տ Ա Ն Կ Ի Ց

ԵՂԱՆԱԿԻՆ ԶԱՐՄԱՐԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԵՌՈՒԹԻՒՆԵՐ ՀԱՍՍԾ ԵՆ  
ՓՈՒՓԱՑԷՔ ՕԳՏՈՒԼ

Կ. Պոլսոյ ամենամանօթ թիփին Կ Ե Մ Ի Ն Ք  
Նորահաստատ Մանածիւղն է .

### ԲՐԵՏԻ ՖՕՆՍԻՅԷ ԷՃԻՓՍԷՆ

16 Մարտ 1914  
1886ինը 362րդ վիճակահանութիւն

#### Ա. ՊԱՐԳԵՆԻ

Թիփ 16 772 կը շահի 50,000 Ֆրանկ  
Հետեւեալ 25 թիւերը կը շահին 1000 Ֆր.

6014 120381 194760 280252 327377  
25589 129097 205887 284206 341374  
68709 164281 286164 300129 341562  
77830 166413 253567 315472 376894  
81861 184051 279519 321838 395115

#### Բ. ՍԷՌԻ

131րդ վիճակահանութիւն

Ա. պարգև 515, 361 50,000 Ֆր.

Հետեւեալ թիւերը կը շահին 1000 Ֆր.

411616 460750 566750 648074 735675  
422156 494168 578930 661991 760261  
432308 506052 599525 684183 765400  
451803 539099 613681 692676 775610  
459517 549960 622907 711402 789284

#### Գ. ՍԷՌԻ

40րդ վիճակահանութիւն

Ա. պարգև 124762 կը շահի 100,000 Ֆր.

Թիփ 391, 580 կը շահի 10,000 Ֆր.

Հետեւեալ թիւերը կը շահին 1000 Ֆր.  
8600 37872 88766 166050 278016  
18664 38907 89436 171091 284026  
25587 46689 105695 194309 305552  
36014 53137 157558 206184 379640  
36816 75424 160998 266461

### ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ԱՂՔԱՍԱԿՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅՈՑ

234 դ թիբած

Գահիրէ, 5 Ապրիլ 1914

Առաջին պարգև

Թիւ	10764	Ղրշ	Ողջ	4000
"	8827	"	"	400
"	1748	"	"	200
"	9001	"	"	100
"	13415	"	"	"
"	11136	"	"	"
"	2848	"	"	"
"	6263	"	"	"
"	3006	"	"	"

Հետեւեալ 40 թիւերը կը շահին 700-  
կան դրուշ :

242	337	430	799	1067	1553
2073	2121	2316	2660	2783	3405
3456	4055	5257	6802	7266	7585
7664	8574	9320	10596	11002	
11011	11279	11436	12099	12155	
12741	12827	12835	13372	13627	
13765	14455	14877	15252	15369	
15461	15640				

## ՓՈՐԱԳՐԻՉ

# Ա. ՄՆԷՄԵԱՆ

## ԶԻՆԳՕԿՐԱՔ

Մոնիանկէս Այի Փողոցին վրայ  
ՇԱՐԱ ԹՕՐԿՈՒՄԱՆ

# ՏՊԱՐԱՆ


## Ա Ր Շ Ա Լ Ո Յ Ս

ԱՐՇԱԼՈՅՍ Տպարանը՝ Արսովեայ եգիպտական Կառավարութեան  
Ներքին Գործոց Նախարարութեան . ամենամեծ խնամքով կը սպասէ .

1. — Արսովեայ Օրաքերը, Հանդէսներ, Պրոշիւրներ, Պարբերա-  
կաններ եւ մանաւանդ Գիրքեր .
2. — Վաճառականական տետրեր՝ եւ գրասենեակի ամէն ճեւղի սր-  
պագրական պիտոյքներ՝ ամէն շեղանակով .
3. — Յայտարարութիւններ, շրջաբերականներ, նամակաւերջումներ,  
Ըազարներ, եւ այլն .
4. — Հարսանեկան տուներ, մահազոյներ եւ այլն .

ԱՐՇԱԼՈՅՍ Տպարանին հասցէն է, ց'նոր սօրիներին . Շարս  
Մոնիանկէս Այի . Սիբասեյ երկարող քրանկէյի գծին վրայ, Հարս - էյ  
Մասապէկ - էյ Գասիլէ, թիւ 40, Տիար Միհաս Երիկեանի յարկա-  
քածնին մէջ .

THE 'SINGER' MANUFACTURING Co



Շարս-էլ-Միզրայի Տավիզ Պրայի սեփականութեանը մէջ .

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինկերներն են եւ ասոնցմէ  
մինչեւ ցարդ 22,000,000 ծախուած է .


400 հ աւելի վկայական եւ մեքայներով վարձատրուած, Երաշխատեալ մեքենաներ .

ԱՄԵՆԷՆ ՄԵՐ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ստացած է .  
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԹՈՒՐԿԻՈՅ ԱՆԳՂԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ  
ԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԷՔԻՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԷԱՑ  
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ե . Ք . ՆՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ .  
ուշագրութիւն դարձնել  
իւրաքանչիւր 'եքենայի  
վրայ Սինկերի ներկայ  
յառկանը յիմ



Չրի դասեր եւ նորոգու-  
թիւններ, յաճախորդայ  
տուներուն մէջ .

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիներո  
նորոգութիւն ամեն կարգի  
Մեքենայից

Ին 2ԱՓ

ԱՇԽԱՐՀՐ : ՈՂՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՆԱՃԻՂԵՐ ՈՒՆՐ

### ՃԱՇԱՐԱՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ՊԱՉԱՐ ՄԻՐՈՒՐ ԹԻՒ 19

ԱՒԵՏԻՍ ՊՅՈՍԱՃԱՆ

Մեր ճաշարանին մէջ կը պատ-  
րաստուին եւրոպական եւ Արեւել-  
եան ընտիր կիրակուրներ . պան-  
դուխտ երիտասարդները եթէ ան-  
գամ մը այցելեն մեծապէս գոհ  
պիտի մնան մատչելի գիներէն եւ  
սպասակութենէն . 14

### Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Ն

«Արշալոյս» ի ամբողջ Ռուսա-  
նիոյ գործակալութիւնը ստանձնած  
է Տիար Կ. Փիլիպոսեան, որուն  
պէտք է զիմել թերթին վե-  
րաբերեալ բոլոր գործերու համար .

Մեր գործակալին հասցէն է .

Mr. G. B. Pilibossian  
F. American  
83 St. Mangalia  
(Roumanie) Constantza

Նոյնպէս Արաբկերի գործակալի  
է Տիար Միսաք Ա. Սուրբան, ու-  
րուն պէտք է զիմել թերթին վե-  
րաբերեալ բոլոր գործերու համար .

## Ի, Ա, ԵՐԱՆ

Հրատարակութիւններ

ԱՅՄՄԷԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ ԱՄԷՆՔԻՆ ԱԼ

- Բառարան հայերէն-անգլիերէն ամս . 50
- Բառարան անգլիերէն-հայերէն » 75
- Հայ. անգլ. եւ անգլ. հայ միասին աշ. 1 -
- Պատ. գրուցարարի հայ. անգլ. » 150
- Գործնական անոյշարաններ » 150
- Սեռային անոյշարաններ » 125
- Գործն. եւ սեռ. անոյշ. միասին » 2 -
- Ժողովրդային երգարան » 2 -
- Երգարան եւ սեռ. անոյշ. միասին » 3 -
- Երգ. եւ գործն. անոյշ. միասին » 3 -

Հասցէ՝ E. A. YERAN  
P. O. BOX 84, Sta. A.  
Cambridge, Mass.

### ՄԱՍԻՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԴԵՐՉԱԿ ՎԱՃԱՌԱԿԱՆ

Փոխադրուած է Շարս Ապտ էլ Ազիզ  
Ապտիի Գարագոյլին մօտ .

Անոնք որ ճաշակաւոր գոսթիւն մ-  
աննալու համար զանազան տեղեր դի-  
մած ու դժգոհ մնացած են, թող ան-  
շամ մը մեր վաճառատունը այցելեն .  
պատրաստ եմ իրենց հետ պայմանաւոր-  
ուիլ որ՝ եթէ իրենց յանձնարարութիւնը  
նը գոհացուցիչ չ'գտնեն, կանխավճարը  
ամբողջովին ետ պիտի ստանան .

Այս պայմանը՝ ճաշակաւոր հագ-  
ուելու փոփոքողներուն համար, նը-  
պատաստուող առիթ մը պիտի ըլլայ .

Ապառիկ ապսպրանքները նկատու-  
ղութեան շին առնուիլ, եւ անոնք որ  
ինծի կը դիմեն, շիւրս կրնան ըմբռ-  
նել ապառիկին տարբերութիւնները .  
Սէ գործի մաքրութեան եւ թէ գի-  
ւերու մօտին .  
1-50 ՄԱՍԻՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

### ԾՈՎԱՅԻՆ ԵՒ ԳԱՂԹԱՅԻՆ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

### Լ. ԵՆՈՎՔԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ԱՂԵՔԱՆԵՐԻՍ (Երկրորդ)

Շարսթական կանոնաւոր երթեւեկ .  
Միացեալ Նահանգներու, Գա-  
նատայի եւ Հարաւային Ամերիկա-  
յի համար .

Գաղթականներու համար չափա-  
ւոր գին .

Աչքի բնութիւնը ճիշտապա-  
կը կատարուի տեղույս մէջ,  
Մանրաւսան սեղիկութեանց

հասար դիմել Գործակալութեան .  
ՄՕՀԱՄԷՏ ԱԼԻ ՀՐԱՊԱՐԱԿ  
Հեռագրական Հասցէ — ԼԵՆՕՔՕ

Փոսթ արկղ թիւ 837  
Թուրքիոյ գաւառներու մէջ  
փոխ - գործակալներ կը փնտռուին

Արսովեայի ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ  
Սեփական Տպարան ԱՐՇԱԼՈՅՍ Լրագրոյ